ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/31

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Լ. Կարապետյանց (լիազորագիր՝ տրված 10.05.2021թ.),

քննելով ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի «Անի կոմունալ տնտեսություն» ԲՀ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄԱՀԿՏ ԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից 14.05.2021թ. ներկայացված և 14.05.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/31 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ֆլեշ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆլեշ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 14.05.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Ֆլեշ» ՍՊԸ կողմից ՀՀ Շիրակի մարզ Անի համայնքի «Անի կոմունալ տնտեսություն» ԲՀ-ի ՇՄԱՀԿՏ ԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/02 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման մեկ չափաբաժնին և պահանջներին համապատասխան հայտ է ներկայացվել:

30.04.2021 թվականին ՇՄԱՀԿՏ ԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/02 ծածկագրով գնման գնահատող հանձնաժողովի անդամների կողմից կայացվել է թիվ 3 արձանագրությունը, համաձայն որի գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտերի գրանցամատյանում գրանցվել է 3 հայտ՝ «Ֆլեշ» ՍՊԸ և «Մաքսօիլ» ՍՊԸ դիզելային վառելիքի համար, իսկ «Հայկ Գոռ» ՍՊԸ՝ սեղմված բնական գազի համար:

Ըստ գնահատող հանձնաժողովի, հայտեր պարունակող ծրարները կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան, իսկ «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան մաս 2-րդ գլուխ 3-րդ կետ 3.1 ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Սակայն, «Ֆլեշ» ՍՊԸ կողմից ներկայացված ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրված են եղել լիազորած անձի կողմից իսկ հայտին կցած եղել լիազորագիրը և լիազորված անձի նայնականացման քարտի օրինակը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող

անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք: Պատվիրատուի մասնակցությամբ իրավաբանական անձինք գնումներին մասնակցում են այլ մասնակիցների հետ հավասար իրավունքով, և այդ կազմակերպություններում պատվիրատուի մասնակցության հանգամանքը չի կարող հանգեցնել այդ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձուն. 3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն. 1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

2. Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն 1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին. 2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

4. Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների

բողոքարկման խորհրդի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

Նույն օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բողոքների քննումն իրականացնում է գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ):

Նույն օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը անգործության ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված ժամանակահատվածում.

2) գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է միչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

7. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

8. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

9. Բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

10. Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձ համանման իրավունքից:

11. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում կայացված որոշումը սույն մասով սահմանված ժամկետում ուղարկվում է պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ որոշումը պատվիրատուին, լիազորված մարմին ու ընթացակարգում ներգրավված կողմերին ուղարկելուն հաջորդող օրը:

Հարկ եմ համարում նշել, որ գնումները իրականացվել են և թափանցիկ կանոնների խախտմամբ, քանի որ «Ֆլեշ» ՍՊԸ կողմից գնահատու հանձնաժողովի հայտեր պարունակող ծրարները կազմված և ներկայացված են եղել սահմանված կարգին համապատասխան, մինչդեռ այդ ամենը անտեսելով «Ֆլեշ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, վկայակոչելով 2-րդ գլուխ 3-րդ կետ 3.1, սակայն որ իրավական նորմը, կանոնը կամ որոշումն են նկատի ունեցել պարզ չէ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս

լիազորած անձը (այստուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Նման պայմաններում հարկ եմ համարում նշել, որ «Ֆլեշ» ՍՊԸ կողմից փաստաթղթերի բնօրինակները և հրավերում նշված թվով պատճենները դրված են եղել ծրարի մեջ, իսկ փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրված է եղել «բնօրինակ» և «պատճեն» բառերը, բացի այդ ծրարը և փաստաթղթերն օրենքի պահանջով ստորագրված են եղել, իսկ լիազորագիրը և լիազորված անձի նույնականացման քարտի պատճեն կցված է եղել հայտին:

Այսինքն, Հանձնաժողովի կողմից արձանագրված խախտումը չի համապատասխանում իրականությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում եմ չկայացած հայտարարելու ՇՄԱՀԿՏ ԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/02 ծածկագրով /չափաբաժին մեկ դիզելային վառելիք/գնման ընթացակարգը և պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/31 բողոքի քննության նպատակով 21.05.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի «Անի կոմունալ տնտեսություն» ԲՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի «Անի կոմունալ տնտեսություն» ԲՀ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.05.2021թ. թիվ 460 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 17.05.21թ. գրության՝ պատասխանվում է, որ ՇՄԱՀԿՏ ԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/02 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահասման նիստի վերաբերյալ տեսաձայնագրություն կամ ձայնագրություններ չեն կարող ներկայացվել, քանի որ տեխնիկական պայմանների բացակայության և այլ պայմաններից ելնելով նիստերը չեն տեսաձայնագրվել:

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը համարում ենք անհիմն, քանի որ հրավերի 2-րդ մաս 3 կետի 3.1 ենթակետի պահանջները, որ վերցված են «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի, այն է՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ, և հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.2-րդ ենթակետի, որով նախատեսված է, որ՝ ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված «7»-րդ օրվա ժամը «11:00»-ն «Ք Մարալիկ Մադաթյան 6» հասցեով:

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար «Կարեն Նալբանդյանը»: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանց հերթականության գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

ՈՒստի ելնելով վերոնշյալ կետերից՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել լիազորված անձի (գործակալի) միջոցով, որը գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացրել փաստաթղթեր՝ անձը հաստատող և լիազորությունները հավաստող փաստաթղթեր:

Ելնելով վերհիշյալից՝ հանձնաժողովի մոտ հարցեր են առաջացել արդյոք ծրարը կնքած և ստորագրած անձը ունեցել է տվյալ լիազորությունները և արդյոք ներկայացնող անձը ունեցել է դրա լիազորությունները:

ՈՒստի ելնելով վերը նշված կետերից և հոդվածներից՝ հայտը չի բացվել և մերժվել է՝ որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող և նույնությամբ հետ է վերադարձվել փոստով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/31 բողոքի քննության նպատակով 21.05.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Անի կոմունալ տնտեսություն» ԲՀ-ի կարիքների համար դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄԱՀԿՏ ԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:
2. Պատվիրատուի կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2021/31 բողոքով ներկայացված գրանցամատյանի պատճենի՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ն փոստային ծառայության միջոցով 28.04.2021թ. ծրարով ներկայացրել է հայտ:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան մաս 2-րդ գլուխ 3-րդ կետ 3.1-ի՝ ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:
4. Պատվիրատուի կողմից «Ֆլեշ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը վերադարձվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ֆլեշ» ՍՊԸ-ի 14.05.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Անի կոմունալ տնտեսություն» ԲՀ-ի 18.05.2021թ. թիվ 460 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի 3.1-րդ, 3.2-րդ և 3.3-րդ ենթակետերի համաձայն՝

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 1 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը:

Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում և կնքում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Ընթացակարգի հրավերի 4-րդ կետի 4.1-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար «Կարեն Նալբանդյանը»: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՇՄԱՀԿՏ ԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից փոստային ծառայության միջոցով ներկայացված ծրարը, Ընթացակարգի քարտուղարի և գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը՝ արձանագրում եմ հետևյալը.

«Անի կոմունալ տնտեսություն» ԲՀ-ի կարիքների համար դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄԱՀԿՏ ԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Գրանցամատյանի համաձայն՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ն փոստային ծառայության միջոցով 28.04.2021թ. ներկայացրել է հայտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան մաս 2-րդ գլուխ 3-րդ կետ 3.1-ի՝ ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուն բողոքի շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

««ՖԼԵՇ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել լիազորված անձի (գործակալի) միջոցով, որը գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացրել փաստաթղթեր՝ անձը հաստատող և լիազորությունները հավաստող փաստաթղթեր:

Հանձնաժողովի մոտ հարցեր են առաջացել արդյոք ծրարը կնքած և ստորագրած անձը ունեցել է տվյալ լիազորությունները և արդյոք ներկայացնող անձը ունեցել է դրա լիազորությունները, ուստի հայտը չի բացվել և մերժվել է՝ որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող և նույնությամբ հետ է վերադարձվել փոստով»:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ.

Ընթացակարգի հրավերի մաս 2-ի 3-րդ կետի 3.1-րդ, 3.2-րդ և 3.3-րդ ենթակետերի համաձայն՝

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով: Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և երկու օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա <u>հայտով</u>

<u>ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:</u>

3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: ***Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): <u>Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:</u>***

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) մրցույթի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4.***<u>Հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը</u>***: ***Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք:***

5. Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումները՝ գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովը, վերադարձնելով «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմքով, որ փոստային ծառայության միջոցով ներկայացված ծրարին կցված չի եղել լիազորագիր, գործել է վերը նշված իրավական նորմերի խախտմամբ, քանի որ նշված իրավական նորմերով հստակ սահմանվում է, որ գործակալի կողմից հայտը ստորագրելու և ներկայացնելու դեպքում հայտով է ներկայացվում վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը, ինչը չի նշանակում, որ ծրարին պետք է կցված լիներ լիազորագիր, ինչի բացակայության պատճառով «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը վերադարձվել էր:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը, քանի որ արձանագրել է Ընկերության կողմից Ընթացակարգի հրավերի մաս 2-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով թույլ տրված խախտում և վերադարձրել հայտը՝ առանց Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջին համապատասխան վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու:

Անդրադառնալով «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված պահանջին, այն է՝ Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելուն, ապա գտնում եմ, որ վերջինիս պահանջը ենթակա է բավարարման հաշվի առնելով այն փաստը, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Մաքսօիլ» ՍՊԸ-ն, որի ծրարը արդեն բացվել և գնային առաջարկը հայտերի բացման նիստում հրապարակվել է, ուստի գտնում եմ, որ «Ֆլեշ» ՍՊԸ-ի խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր է միայն Ընթացակարգը չկայացած հայտարարելու պայմաններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից 14.05.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «ՇՄԱՀԿՏ ԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**